

Հ. Ս. Խ. Հ.  
ԿԵՆՏՐՈՒԹՎԱՐ

ԼՈՒԺ-ՌԴ-ԿՈ-  
ՄԱՏ, ՆՈԽԱ-  
ԴՊՐՈՑԱԿԱՆ  
Բ. Ա. Ժ. Ի. Ե.

ԽԱՂԸ ՅԵՎ ԱՇԽԱ-  
ՏԱՆՔԸ ԱՄԱՌՎԱ-  
ՄԱՆԿԱԿԱՆ  
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՄԱՆԿԱԿԱՆ  
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ  
Ի Ս Պ Ա Ս  
ԿՈԼԵԽՈԶՈՒ-  
ՀՈՒՆ ԳԱՐ-  
ՆԱՆԱՑԱՆԻ  
ՀՆԹԱՑՔՈՒՄ

Խաղը յերեխայի հիմնական գործունեցությունն է:  
Նա մեծ զեր է խաղում մանկական կոլեկտիվի կազմա-  
կերպման գործում, վորովճեան նրա միջոցով և, վոր  
յերեխաները համախմբվում են:

Բացի այդ, խաղն ունի մեծ գաստիարակչական նը-  
շանակություն, նա-նպաստում է Փիզ. գաստիարակու-  
թյանը, նրա միջոցով ամրապնդվում են յերեխաների  
սուացած պատկերացումները և զրույթները, զարդա-  
նում են ստեղծագործական կոմքինատոր և կոլեկտի-  
վիստական ունակությունները. խաղերը լինում են  
կազմակերպված և ստեղծագործական: Կազմակերպված  
կոչվում են այն խաղերը, վորոնք տարիում են վորոշ կա-  
նոններով, որինակ՝ «Դրոշակների խաղ», «Կոլիսող կա-  
ռուցիք», «Անտուն նսպաստակ» և այլն. ստեղծագոր-  
ծական խաղը ծագում է յերեխաների ձեռներեցու-  
թյամբ, նրանց առաջադրած թեմայով, որինակ՝ «Գը-  
նացք», «Չի», «Կոլիսող», «Կոտովերատիվ», «Կարմիր բա-  
նակայիններ»: Ստեղծագործական խաղերի բովանդա-  
կությունն ստեղծում են իրենք, յերեխաները: Ղեկա-  
լարը կարող են հատկացնել այդ խաղի համար համա-  
պատասխան խթան հանդիսացող նյութեր, կազմակեր-  
պել միջավայրը խաղին կանոնավոր և հետաքրքրական  
անթագործական համար: Որինակ, յեթե յերեխաները ու-  
ղում են խաղության համար, կամ կայի յետ դը-

բոշակներ, փող, թմրուկ, զինվորական գլխարկներ, Հրացանների համար փայտիկներ: «Գնացք» խաղալու համար կարելի յէ տալ սուլիչ, կարմիր և կանաչ դրոշակ: «Գործարան» խաղալու համար՝ շինարարական նյութ-տախտակներ, արկղներ, խողովակ, բանվորական խալաթ, կարմիր գլխակալ, գործիքներ: Ղեկավարը միշտ պետք է հետեւի յերեխանների խաղին և խողի ընթացքում յերեխանների հայտնաբերումներին:

Յեթե խաղի ընթացքում նկատվի հին կենցաղի և այլ հակադաստիբարակչական բացասարկան արտահայտություններ, պետք է յերեխանների համար աննկատելի կերպով փոխել խաղի ընթացքը:

Որինակ յերեխանները խաղում են «Թալան»:

Ղեկավարը յերեխանների համար աննկատելի կերպով փոխում է խաղի ընթացքը, վերածելով «Հրդեհ» խաղի, ուր Հրդեհաշեջները փրկում են վառվող տաճիրերը և մարդկանց:

Մեծ պետք է տրմի շարժական խաղերին, վարոնք նախատեսմ են յերեխայի Փիզ. դաստիարակչությանը և զգայարանների զարգացմանը:

Յերեխանները վաղում են, ցատկում, բարձրանում սանդուխքներով, գնդակի դցում, նշան բռնում:

Այդ խաղերի համար պետք է տալ սանձեր, ցատկիչներ, գնդակներ, ողակներ, կեղլի, ջատուկ ցանկապատ, գերան, սանդուխք:

Խաղերի համար պետք է պատրաստել մաքուր, Հարթ Հրապարակ: Փոքրերը մեծ մասամբ խաղում են ստեղծադործական խաղեր, վորովհետեւ դեռ չեն կարող չետեմիլ խաղի կանոններին: Նրանց աստիճանաբար պետք է սովորեցնել այդ:

Շարժական խաղերը չի կարելի տալ ճաշից հետո, հեռայիր ելուկուրսիայից հետո, այլ նատակյաց աշխատանքից հետո, որինակ նկարչությունից, պատմությունից, զրաւյցից հետո և այլն:

## ԱՎԱԶԸ ՑԵՎ ԶՈՒՐԸ

ՎՃ

Յերեխանները շատ են սիրում ավազը և ջուրը:

Այդ նյութերով նրանք հնարաւմ են շատ հետաքրքրական խաղեր, ավազի վրա կամուրջներ, քաղաքներ, կոմիուններ են շինում, այդիներ են անկում:

Յուրաքանչյուր հրապարակում անհրաժեշտ ե ունենալ ավազ և ջուր: Առհասարակ ավազը բերում և թափում են պատահած տեղը, յերեխանները նստում են ավազի մեջ և խաղում: Ավազն այդ ձևով տալ չի կարելի, վնաս է, վորովհետեւ յերեխան ամբողջ ժամանակ խաղում է կռացած, գլուխը կախ գցած, արյունը գլուխը և իջնում:

Բացի այդ, խաղից հետո ավազը մնում է բաց: Ավազի համար անհրաժեշտ ե ունենալ սեղանի նըման վոտների վրա ամրացրած հատուկ արկղ:

Յեթե այդպիսին գեցար և ճարել, կարելի յէ խփել գետնին չորս բարակ գերան և վրան մեխել հասարակ արկղ, վորի կողքերը պետք է սղոցել, վորպեսզի շատ բարձր չլինի: Սեղանի բարձրությունը պետք է լինի մոտավորապես յերեխայի հասակի կեսը (30–35 սմ.), տուն զնալիո սեղանը պետք է ծածկել խուփով:

Ավազի խաղերի համար անհրաժեշտ ե տալ փայտի և թիթեղի ամաններ, սավոկ, բանկաներ, բաժակներ: Վորպեսզի խաղերն ամելի հետաքրքրական և բազմազան լինեն, ցանկալի յէ ունենալ ֆաներայից պատրաստած պիտներների, բանակայինների, ծառերի, կենդանիների ձեռք (Փեղութաներ), վորանք յերեխանները կանդնեցնում են ավազի մեջ: Բացի այդ յերեխանները ոգտագործում են փայտիկներ, ճյուղեր և այլն:

Պետք է հետեւիլ, վոր խաղի ժամանակ ավազը յերեխայի աչքերը, բերանը չթափվի: Խաղից հետո անհրաժեշտ ե լվանալ ձեռները:

Խաղալիս յերեխաները ծանոթանում են ավագի հաւակություններին։ Հինգ տարեկան յերեխան արդեն կարող է իմանալ, վոր ավազը իր միջով ջուր և անցկացնում, թաց ավազը լցրած տմանի ձևն է պահպանում։ չորտնալիս փշրկում է։

Դրա համար զեկավարը կարող է փոքրեր կատարել։ Ետքերում և ջուր, յերեխաները փռքը դույլերով ջուր են ցանում ավագի վրա, դիտում են, թե ինչպես ջուրն անցնում է ավագի միջով, ավազը թրջվում է։ Եքըս-կուրսիաների ժամանակ մեծ յերեխաները կարող են իմանալ, թե ինչու համար ե գործածվում ավազը։ Թե ինչպես են շենքերը կառուցելիս ավազը շաղաղում կավի հետ և այլն։

Զրի հետ խաղալը յերեխաների ամենասիրելի զբաղ-մունքն է։ Զրի համար սկետք և ունենալ սեղանի վրա ամրացված հատուկ տաշտ։

Սեղանի վոտների բարձրությունը փոքրերի համար մոտավորապես 30 սմ., տաշտի յերկարությունը 115 սմ., լայնությունը 50 սմ.։

Ցանկալի յե, վոր տաշտը տակից ծակ ունենա հա-տուկ խցանով փակած, վորպեսզի հեշտ լինի ջուրը թա-փելը. խաղալու համար տրվում են փայտի բաժակներ, ցողուղներ, շաքեր, քարեր, խցաններ, լողացող խաղա-լիքներ, նավակներ, ձկներ, գորտեր, բաղեր։ Խաղալով յերեխաները կիմանան, վոր քարը, յերկաթը ջրի մեջ ընկղմվում են, խցանը և փայտը լողում են ջրի յերե-սին։ Ցանկալի յե տանել յերեխաներին, յեթե շատ հե-ռու չի գետի ափը, ցույց տալ նավակ։

Խաղի ժամանակ յերեխան կարիք է զգում խաղը լրացնող իրերի։

Այդ պահանջը առաջ է բերում յերեխայի աշխա-տանքը և կապում է խաղի աշխատանքի հետ։

## ԱՇԽԱՏԱՆՔ

Հրապարակի կյանքը լայն հնարավորություն և տալիս կազմակերպելու յերեխաներին աշխատանքի շուրջը։

Աշխատանքը նպաստում է յերեխայի մտավոր և ֆիզիկական զարգացմանը և դատիարակում կուեկտի-գիստական ունակություն։ Միայն աշխատանքով չպետք է ծանրաբեռնել յերեխային, այլ պետք է տալ նրա ու-ժերին համապատասխան աշխատանք։

Որինակ չի թույլատրվում բարձրացնել ծանր իրեր, մեծ գույլերով ջուր կը ել, աշխատել մեծ և ծանր գոր-ծիքներով, ավլել փոշոտ հրապարակը։

Բոլոր աշխատանքները պետք է բղինեն մանկական կուեկտիվի պահանջներից, կը թաղաստիարակչական սպահանջներից և սկետք է յերեխաների համար հետաքր-քրական լինեն։

Յերեխաները կատարում են ինքնասպասարկման աշխատանք, կահավորում են սենյակը, խոնավ չորսվ սրբում են փոշին, լվանում և դասավորում են թեյի ա-մանները, բաժակները, բաժանում նախանաշը, մաք-րում բանջարեղենը, մանկահրապարակի համար պատ-րաստում են քաղցրավենիք, պափկլու, չորացնում են սրբեր, պատրաստում են խմորեղին։ Միայն այդ աշ-խատանքները պետք է անցկացվեն առողջապահիկ կեր-պով կազմակերպված միջավայրում։ Որինակ՝ խմորե-ղեն պատրաստելու համար անհրաժեշտ են հատուկ մա-քուր տախտակ, զբոնակ, մաքուր գողնոց, ամաններ։ Բանջարանոցում և ծաղկոցում յերեխաները փորում են ջողը կապում մարգեր, ցանում, քաղհանում։

Աշխատանքի ընթացքում ծանոթանում են հողի տե-

սակներին, բույսերի վնասատուներին, նրանց դեմ պայքարելու միջոցներին:

Խնամում են կենդանիներին (հավեր, ճագար, այծ, խոզ, թռչուններ) ծանոթանում են նրանց կյանքին և բաղմացմանը:

Յերեխանների ձեռքի աշխատանքների համար անհրաժեշտ ե ձեռք բերել բազմազան անպետք նյութեր (բրոսովի մատերիալ), վորը կարելի յի գտնել ամեն տեղ՝ փայտի, կաշվի, թէթեղի կտորներ, լուցկու տուփեր, կտորեղեն, կոնսերվի բանկաներ, յերկաթալար, թել, կոճ, ստվարաթուղթ, հին մեքենաների մասեր, խոզակազին, մասուր, մամուռ, տերեններ և այլն:

Այդ նյութերը պետք ե մաքրել, դառավորել ըստ տեսակների և դրանց հատուկ տեղ հատկացնել: Դրանցից կարելի յե պատրաստել խաղալիքներ, վորպեսզի տեսնելով յերեխան ինքն ել ցանկություն ունենա պատրաստել նմանը:

Այդ նյութերը նպաստում են յերեխայի ըստեղծաղոթական ընդունակությունների վարդացմանը:

Նրանցից յերեխանները պատրաստում են խաղալիքներ և ոգտակար իրեր: Որինակ՝ տախտակի կտորներից և կոճից կարելի յի պատրաստել կախիչ, համրիչ, լուցկու տուփերից՝ նավ, շոգեշարժ, սեղան, տրակտորի անիզներ, լուսանկարի ապարատ, ծառի կեղեվից՝ նավակներ, կաղինից և լուցկիններից՝ մարզիկ և այլն:

Քարերը, խեցիները, կաղինը, մասուրը, զանազան գույնի աշխան տերեններն ոգտագործում են հաշիվ սովորելու համար: Հավաքած ծաղիկներից և տերեններից կարելի յի պատրաստել ալբումներ, կոլեկցիաներ:

Թուղթը ծալում՝ նավակ, ծրարներ, անձեռնոցիկներ են պատրաստում և այլն:

Աշխատանքային դաստիարակության նպաստում են և եքոկուրսիանները, գեղի արտադրություններ՝ ջրա-

զաց, կոլխոզ, սովինոսով, մեղվանոց, արհեստանոց, այսի բանջարանոց, թուչնաբուծարան:

Այստեղ յերեխաններ ծանոթանում են բանվորների աշխատանքին, մեքենաներին, հում նյութերի մշակմանը: Ցանկալի յե ծանոթանալ առաջի հերթին այն արտադրության, ուր աշխատում են յերեխանների ծնողները (յեթե բարդ և վնասակար չեն):

Այդ եքսկուրսիաններից հետո յերեխանները անպետք նյութերից կարող են պատրաստել ջրաղաց, ավտո, մեղվանոց, տրակտոր և այլն:

ՀՀ Ազգային գրադարան



NL0223456

Դաշտակ 200



Տիրամ 2000

Գետերական առարկան, Եկաման, ունկն, Բնակչություն

Սրբ. Ա. Հակոբի բուհու

50. 338

372  
Mu-19